

ԳԵՂԵԳԿՈՒՀԻԱՅԻ

Յիշում եմ, այն ժամանակ երբ զեռ գիմ-
նալիոնի հինգերորդ թէ վեցերորդ դասատան
աշակերտ էի, պապիս հետ Բալչոյ - Կրեպկոյ
դիւղից գնում էի Դոնի նահանգի Բոստով քա-
ղաքը: Օգոստոսեան մի կիղիչ, տիտուր եւ յոդ-
նեցնող օր էր: Շոգից եւ չոր տաք քամիից, որ
մեր գէմ փոշիի ամպեր էր քշում, աչքներս
փակում էին, բերաններս չորանում, չէինք ու-
ղում ոչ նայել, ոչ խօսել, ոչ մտածել: Եւ երբ
նիրհող կառապան խալսու Կարպօն ձիան վրայ
մտրակը շարժելով զդակիս էր խիստմ, ևս չէի
բողոքում, ոչ մի ձայն չէի հանում, եւ միայն
կիսաքնից զարթնելով հեղ ու տիտուր կերպով
նայում էի հեռուն, թէ արդեօք փոշիի միջից
մի դիւղ չի նկատում: Զիերին կեր տալու հա-
մար, մենք կանգ առանք հայկական մեծ Բախ-
շի-Աւաշ^(*) դիւղում պապիս ծանօթ հարուստ
մի Հայի մօտ: Երբեք ևս իմ կեանքում աւելի
կարիկատուրային մի բան, քան այդ Հայն էր,
չէի տեսել: Երեւակայեցէք ձեղ մի փոքրիկ
խուզած գլուխ, թոնձը եւ ներքեւ կախուած
յօնքերով, թուշնային քիթով, երկար ճերմակ
րեխերով, եւ լայն բերանով, որից դուրս էր
ցցուած մի երկար, կեռասի փայտից չիրուխ: Այդ
գլուխը անշնորհք կերպով կպցրած էր մի
նիհար ու կուղիկ մարմնի, որը հագած էր մի
Փանաստիկ շոր, այն է կարճիկ կարմիր բաճ-
կոն եւ լայն ու փայլուն կապոյտ վարտիք:

(*) Այժմեան Միասնիկեան ինքնավար
բայոնում, կամ առաջ, Բախչի Սալահ անուն
դիւղ չկայ, այլ կայ Մեծ Սալահ: Դ.Թ.

Ման էր գալիս այդ մարմինը ոտքերը չունելով եւ
հողաթափերը քսոքստացնելով: Խօսում էր ա-
ւանց շիրուխը բերանից հանելու, բայց բոնում
էր իրեն, Հային յատուկ պատուով: չէր ժըպ-
տում: չուում էր աչքերը եւ աշխատում, որքան
կարելի է, հիւրերի վրայ քիչ ուշք դարձնել:

Այդ Հայի սենեակներում ոչ քամի կար,
ոչ փոշի, բայց նոյնպէս անդուրեկան էր, խեղ-
դուկ եւ տիտուր, ինչպէս դաշտում եւ ճանա-
պարհն: Յիշում եմ, ևս փոշեթաթախ եւ տօ-
թից տանջուած, նստել էի անկիւնում, մի կա-
նաչ սնտուկի վրայ: Չներկուած, փայտէ պա-
տերը, կահկարասին եւ զեղին ծեփով յատակ-
ները արձակում էին արեւով խանձուած, չոր
փայտի հոտ: Որ կողմ նայես, ամէն տեղ ճան-
ճեր, ճանճեր, ճանճեր: Պապս եւ Հայը ցած
ձայնով խօսում էին արածացնելու, արօտատե-
ղի եւ ոչխարների մասին: Ես գիտէի, որ սամա-
վար դնելը պէտք է տեւի մի ամբողջ ժամ, որ
պապիկիս չայ խմելը պէտք է քաշի ոչ պակաս
քան մի ժամ, եւ որ յետոյ պէտք է պառկի մի
երկու կամ երեք ժամ, որ իմ օրուայ մի քա-
ռորդը պիտի կորչի սպասելով, որից յետոյ
էլի տաքը, փոշին, լրխկահարող ճանապարհ-
ները: Ես լուսմ էի երկու ձայների մըթմթոցը
եւ ինձ սկսում էր թուալ, որ Հային, ամանե-
ղնների պահարանը, ճանճերը, եւ պատուհան-
ները, որոնցով արեւը ներս էր թափում իր
տաքութիւնը, եւ տեսնում եմ վաղուց - վա-
ղուց, եւ թէ կը գաղարեմ նրանց տեսնելուց
չառ հեռու ապագայում: Եւ Ես համակում էի
ատելութեամբ դէպ ի դաշտերը, դէպ ի արե-
գակը, դէպ ի ճանճերը... Թաշկինակով խախ-

լուշկան^(*) ներս բերեց մատուցարանի վրայ ամանեղիններ, յիսոյ սամազգարը: Հայը առանց շուապելու դուրս եկաւ նախասենեակ, եւ կանչեց:

— Մաշեա՛, ներս ե՛կ թէյ ածա՛: Սա որտեղ ես, Մաշեա՛:

Լուսեց արագ քայլերի ձայն, եւ սենեակ մտաւ մօտ տասնըլից տարեկան մի աղջիկ, հասարակ չթի կապայ հագած, դլիսին ճերմակ թաշկինակ: Ամանեղինը լուանալուս եւ թէյ ածելուս, նա կանգնած էր մէջքը դէպ ի ինձ արած եւ ես նկատեցի միայն, որ նրա մէջքը բարակ էր, ոտքերը բորիկ, եւ որ մերկ կրունկները ծածկում էին ցած թողուած ծնկաչորով^(*):

Տանտէրը հրաւիրեց ինձ թէյի: Նստելով սեղանի քով, ես նայեցի աղջկայ երեսին, երբ նա ինձ մեկնեց բաժակը եւ յանկարծ այնպէս զգացի, որ կարծես հոգուս միջով անցաւ մի քամի եւ դէն փէց նրա վրայից օրուայ բոլոր տպաւորութիւնները իրենց տիսրութեամբ եւ փոշիներով: Ես տեսայ կախարդիչ գծագրութիւնները ամենազեղցիկ դէջքերից մէկի, որպիսինները երբեւիցէ պատահել են ինձ թէ՛ արթուն ժամանակս եւ թէ՛ երկացել են երազիս մէջ: Իմ առաջ կանգնած էր մի զեղեցկուհի, եւ ես այդ հասկացայ հէնց առաջին հայեացքից, ինչպէս հասկանում եմ կայծակը:

Ես պատրաստ եմ երդուել, որ Մարիամը, կամ ինչպէս հայրը կոչեց նրան, — Մաշեան, մի իսկական զեղեցկուհի էր, բայց հաւասարացնել այդ ես չեմ կարողանում: Երբեմն լինում է, որ ամպերը անկարգ կերպով հաւաքում են հորիզոնում եւ արեւը նրանց ետևում թագնըւելով, նրանց եւ երկինքը ներկում է հազարե-

(*) Խախուլ կամ խախլուշկա վիրաւորական խօսք չէ, ինչպէս կարծում են Անդրկովկաստում, այլ հշանակում է Անկրայնացի: Ծ.Թ.

(*) Մնիկաշոր են կոչում Շամախեցիք կանացի շապկընկերը կամ փոխանը, որ կարելի է փոխարէն եռապկայի կամ ժիւպնի գործադրութեամբ:

լանդ, — ծիրանի, նարնջի, ոսկու, մանիչակի եւ մոյզ-վարդի զոյներով, — մի ամպիկը նման է վանականի, միւսը՝ ձուկի, երրորդը՝ զլուխը շալմայով Տաճկի: Արեգակի շառագնոյթը զբաւել է երկնքի մի երրորդը. փայլում է նա եկեղեցիների համարի վրայ, հարուստների տան ապակիների միջից, արտացոլում է գետերում, լճակներում, թրթուում է ծառերի վրայ, հեռուուհեռու արշալոյսի Փօնի վրայ, որտեղ որ գիշերելու թռչում է վայրի բաղերի երամը: Եւ կովարածը որ քչում էր կովերին եւ բրիչկայի մէջ ամբարտակի վրայով անցնող երկրաչափը եւ զրունող պարոնները — ամենքը դիտում են արեւմուտը եւ ամենքը մինչ վերջինը գտնում են, որ նա սարսափելի զեղեցիկ է, բայց ոչ չգիտէ եւ չի կարող ասել ինչումն է այդտեղ զեղեցկութիւնը:

Ի իայն ես չէի գտնում, որ Հայուհիկը դեղեցիկ է: Ութսուն տարեկան ծեր պապիկս էլ, որ մի խստ մարդ էր եւ անտարբեր թէ՛ դէպ ի կանայք ու թէ՛ դէպ ի բնութեան զեղեցկութիւնը եւ որ ամբողջ բոսէ քնքութեամբ նայում էր Մարիամին, հարցուց.

— Սա ձեր աղջիկն է, Ազէտ Նազարիչ:

— Աղջիկս է: Սա աղջիկս է . . . — պատասխանեց տանտէրը:

— Լաւ օրիորդ է, — գովեց պապիկս:

Հայուհիի զեղեցկութիւնը նկարիչը կը կոչէր կելասիկական եւ ճիշդ: Սա իսկական այն զեղեցկութիւնն էր, որին գիտելը, Աստուած գիտէ որտեղից, ձեր մէջ ներմուծում է մի հաւատ, որ դուք տեսնում էք կանոնաւոր գիմագծեր, որ մաղերը, աչքերը, քիթը, բերանը, միզր, կուրծքը եւ ջահել մարմնի բոլոր շարժումները, միաձուլուել են՝ միասին կազմելով ներդաշնակութեան մի ամբողջութիւն, որի մէջ բնութիւնը մի ամենափոքրիկ սխալ զիծ անզամ չի մտցրել: Զեղ թւում է, չգիտեմ ինչու, որպէս թէ խոչալական զեղեցիկ կինը յատկապէս հէնց այդ տեսակ քիթ պէտք է ունենար, որպիսին ունէր Մարիամը, — այսինքն ուղիղ, փոքրիկ սապատով, այդպիսի մեծ՝ սեւ

աչքեր, այդպիսի երկար արտեւանունքներ, հէնց այլպիսի յոզնատանջ հայեացք, որ նրա սեւ, խուճում ժաղերը եւ ունքերը այնպէս էլ վայելում են իր քնքոյց, ճերմակ դոյնի ճակատին, թշերին, ինչպէս կանաչ եղեղը խաղաղ գետակին: Մարիամի պարանոցը եւ նրա մատղաշ կուրծքը թոյլ են զարգացած, բայց որ ժարդ կարող լինի նրանց քանդակագործել, թւում է նա պէտք է տիրէ հոկայական ստեղծագործական տաղանդի: Նայում էք դուք Մարիամին եւ քիչ առ քիչ ցանկութիւն է գալիս ձեր յրայ ասել նրան որեւէ անսովոր, մի հաճելի, մի սրտազին ու գեղեցիկ բան, նոյնպիսի գեղեցիկ, ինչպէս նա ինքն է:

Եկզրից ինձ համար վիրաւորական եւ ամաչելի եղաւ, որ Մարիամիկը ինձ վրայ ոչ մի ուշաւրութիւն չի զարձնում եւ բոլոր ժամանակ ցած է նայում. թւում էր ինձ, որ ինչ որ մի առանձին, բախտաւոր եւ հպարտ օդ, բաժանում էր նրան ինձնից եւ նախանձելով վարագուրում էր նրան իմ հայեացքից:

«Այդ նրանից է, — մտածեցի ես, որ ես ամբ ողջովին փոշոս եմ, արեւակեզ, եւ նրանից, որ ես գեռ փոքր եմ»:

Բայց յետոյ քիչ առ քիչ իմ մասին մտածելը մսուցայ եւ ամբողջովին անձնատուր եղայ գեղեցկութեան դգացմունքի: Ես արդէն չէի յիշում դաշտային տիրութեան մասին, փոշիի մասին, չէի լուսմ ճանձների վժժալը, չէի հանկանում թէյի համը եւ միայն դդում էի, որ ինձնից հեռու, սեղանի միւս կողմում, կանգնած է գեղեցիկ մի աղջիկ:

Զգում էի գեղեցկութիւնը տարօրինակ կերպով: Ոչ թէ ցանկութիւն, յափշտակութիւն կամ հաճոյք: Էր գրգուում իմ մէջ Մարիամիկը, այլ մի թէեւ ծանր, բայց հաճելի թափիծ: Այդ թափիծը անորոշ էր, մութ, ինչպէս քունը: Զգիտեմ ինչու, ես խղճացի եւ ինձ, և՛ պապիկիս եւ Հային, եւ հէնց այն հայ աղջկան էլ. եւ իմ մէջ մի այնպիսի զգացմունք կար, որպէս թէ սենք չորսերս էլ կորցրել ենք կեանքի համար մի շատ կարեւոր բան, որը էլ երբեք

չոլէաք է գտնենք: Պապիկս նոյնպէս տիրեց: Այլեւս նա չէր խօսում ոչ մարգագետնի, ոչ էլ ոչխարների մասին. այլ լուս եւ մտախոհ կերպով էկ մէկ մտիկ Մարիամին էր մտիկ անում:

Թէյից յետոյ պապիկս պառկեց քնելու, իսկ ես դուրս եկայ տնից և նստեցի տան առաջ: Տունը, ինչպէս եւ Բախչի-Սալահի բոլոր տները, գտնեում էր արեւից կիզուած մի տեղում. չկային ոչ ծառեր(*), ոչ ծածքեր, ոչ ստուեր: Տանաիրոջ ահազին բակը, ծածկւած էր թախտով ու փիփերթով, եւ այդ չնայելով սաստիկ չերժութեան: Բակում տիրում էր կենդանութիւն եւ ուրախութիւն: Ցածկեկ ցանկապատերէց մէկի միւս կողմում, որոնք այս ու այն կողմերում մասերի էին բաժանում ընդարձակ բակը, զրադուած էին կալսելով: Կալի իսկական մէջտեղում ամրացած սիւնի շուրջը վագում էին տասերկու հատ շարքով լծած ձիեր, որ իրենից պատկերացնում էր մի երկար բաղիյուս: Մօտիկում ման էր զալիս երկար ժիւետով եւ լայն շալվարով մի խախով:

Նա մտրակով շրբմիացնում էր եւ կանչում մի այնպիսի եղանակով, որ կարծես կամենում էր ձիաներին գրգուել եւ պարծենալ նրանց վրայ ունեցած իրաւոնքով:

— Հա-ա-ա՝ անիծուածներ: Հա-ա-ա՝ խարեա ընկնիք դուք: Հա՛, վախեցա՞ք:

Այդ ճերմակ, աշխատ ու ճարտուկ ձիաները չէին հասկանում, թէ սա ինչո՞ւ են իրենց ստիպում միեւնոյն տեղում այդպէս պտոյտ դալով ոտնակոխ անել ցորենի դարմանը: Նըրանք վագում էին դժկամակութեամբ, կարծես դուով եւ կոտրուած սրտով պոչները ճոճելին: Քամին բարձրացնում էր նրանց սմբակների տակից ամբողջ ոսկեզոյն դարմանի ամպեր եւ տանում վանդակապատի վրայով հեռուները:

(*) Նոյն պատկերն էր մինչ այսօր բոլոր այսեղի հայ գիւղերում, այսինքն ոչ ծառեր, ոչ ալ բուսականութիւն, բանջարանց են. միայն խորիրդայնացումից յետոյ ուշի են եկել եւ ծառեր տնկել...

Բարձր եւ թարմ դէղերի շուրջը, փոցիսեր ձեռներին, վխտում էին կեանիք, շարժում սայւեր. իսկ դէղերի ետեւի միւս բակում, նոյնպիսի սիւնի շուրջը պտըտում էր մի այլ գիւժին նոյնատեսակ ձիերի, եւ մի այլ նոյնատեսակ խախոլ մտրակում ու ծաղրում էր նրանց :

Սանդուխիքի աստիճանները, որոնց վրայ ես նստած էի, չատ տաք էին, տաքի ոյժից բարակ ձաղերի եւ լուսամուտների շրջանակների վրայ տեղ դուրս էր ընկել փայտի սոսինձը: Աստիճանների եւ փեղկերի տակ ստուերի շերտերում իրար էին սեղմուել կարմիր բողոքներ: Արեգակը այրում էր ե՛ւ գլուխս, ե՛ւ կուրծքս, ե՛ւ մէջքս. բայց այդ ամէնը ես բանի տեղ չէի դնում. ես միայն զգում էի, որ ինձնից այն կողմ նախասենեակի եւ սենեակների տախտակէ յատակին տկտկացնելով ման են զայիս բորիկ ոտքեր:

Չայի ամանները հաւաքելով, Մարիամը վաղելով անցաւ աստիճանների վրայից, վրասքամի բուրելով, և թոշունի նման թուաւ դէպի ծխաթափ եղած մի շինութիւն, երեւի խոհանոց, որտեղից փչում էր խորոված ոչխարի մըսոի հոտ եւ լուսում բարկացած հայերէն խօսակցութիւն: Նա անյայտացաւ խաւար դրան մէջ, իսկ նրա տեղ չէմքում երեւաց մի պառաւ կոտացած հայ կին, երեսը կարմիր, եւ կանաչ շալվար հագած: Պառաւը բարկացած էր եւ մէկին անարգում էր: Շուտով չէմքում երեւաց եւ Մաշեան. խոհանոցի տաքից նա կարմրել էր, ուսին բոնած էր մի մէծ հաց(1), որի ծանրութեան տակ նա ծոռւել էր գեղեցիկ կերպով. վաղելով բակի միջով, նա զնաց կալատեղի, սուզուելով յարդի ոսկեզոյն ամպի մէջ եւ անյայտացաւ սայլերի ետեւում: Խախոլը որ քըշում էր ձիերին, ցած բաց թողեց մտրակը, խաղաղուեց եւ մի բոպէ լուելով նայեց սայլերի կողմ, յետոյ երբ հայուհին նորից երեւաց ձիե-

(1) Միասնիկեան բայոնի հայ բոլոր գիւղերում ընդունուած հացը ոռւսական կալաշնի:

րի մօտ եւ անցաւ ցանկապատի վրայով, նա հանապարհ քցեց նրան աչքերով եւ ձիաների վրայ այնպիսի մի տոնով կանչեց, որ կարծես շատ բարկացած էր:

— Ա՛, չար ողիներ, անդունդ գլորուէք դուք...:

Եւ յետոյ բոլոր ժամանակ ես անդադար լսում էի Մարիամին բորիկ ոտքերի քայլերը, տեսնում էի որպիսի լուրջ եւ հոգսալի դէմքով նա թոշում էր բակով: Կամ վաղում էր աստիճաններով՝ ինձ քամի անելով, կամ խոհանոց, կամ դէպի կալ, կամ դարրազից դուրս, եւ ես հազիւ էի հասնում գլուխս ծռել, որ հետեւիմ նրա ետեւից:

Եւ որքան չուտ չուտ էր իրա գեղեցկութեամբ իմ աչքերի առջեւ նշմարւում նա, այնքան աւելի էր իմ թախիծը ուժեղանում: Ես խղճում էի ե՛ւ ինձ, ե՛ւ նրան, ե՛ւ խախոլին, որ ամէն անդամ իր հայեացքով ճանապարհ էր քցում նրան, երբ նա յարդի քուլաների միջով վազում էր դէպի ի սայլերը: Արգեօք նախանձէ էր իմ մէջ դէպի ի նրա գեղեցկութիւնը, թէ ափսոսում էի, որ այդ աղջիկը իմս չէ եւ երբեք իմը չի էլ լինելու, որ ես նրա համար մի օտար եմ, թէ խառն մի զգացմունք էր, որ նրա անօրինակ գեղեցկութիւնը պատահական է, չպէտք մի բան է, ինչպէս ամէն ինչ երկրի վըրայ, ոչ յաւիտենական. կամ, զուցէ իմ թախիծը այն առանձնայտուկ զգացմունքն է, որը մարդու մէջ զարթնում է իսկական գեղեցկութիւնը զիտելիս, Աստուած զիտէ:

Սպասելու երեք ժամերը աննշմարելիօրէն անցան: Ինձ թուաց, կուշտ կերպով Մարիամին ես զեռ չգիտած, Կարպօն արդէն ձիին տարել էր զետր, լողացրել եւ բերել սկսել լծել: Զին թաց էր, եւ բաւականութիւնից փոնչում էր եւ սմբակներով խփում լծակներին, Կարպօն կանչում էր նրա վրայ «Յետ կանդնի՛ր»: Պապիկս էլ զարթնեց: Մաշեան ճոնչոցով բացեց մեզ համար դարրազը. մէնք նստեցինք սայլ եւ բակից դուրս եկանք: Գնում էինք մէնք անխօս, կարծես մէկոմէ կու վրայ բարկացած:

Երբ արդէն երկու երեք ժամից յետում հեռում երեւացին թոստովին ու նախիջեւանը, Կարպօն, որ մինչ այդ բոլոր ժամանակ լուս էր, արագութեամբ յետ նայեց եւ ասաց.

— Բայց ի՞նչ հրաշալի էր Արմեաշկայի աղջիկը:

Նա մտրակեց ձիաներին:

Բ.

Մի այլ անգամ, երբ արդէն ուսանող էի, երկաթուղով գնում էի դէպ ի հարաւ։ Մայիս էր Մի կայարանում, որը կարծեմ Բելզորողի եւ Խարկովի մէջտեղումն էր, վակոնից ելայ պլատֆորմ զրօննելու։

Կայարաննեան այգում, պլատֆորմում եւ դաշտում իջել էր երոկոյի ստուերը, կայարանը իրենով վարագուրում էր արեւի մայրամուտը, բայց շողեկառքից ելնող ծխի ամպերը քնքոյց վարդագոյն ներկուած բարձունքները ցոյց էին տալիս, որ արեւը դեռ բոլորովին մայր չի մտել։

Պլատֆորմով անցուղարձիս նկատեցի, որ զրօնող ճամբորդների մէծամասնութիւնը ման էր գալիս եւ կանգ առնում երկրորդ կլասի վակոնի մի լուսամուտի առջեւ դէմքերի այնպիսի արտայայտութեամբ, որ կարծես այդ վակոնում նստած էր մի ինչ որ նշանաւոր մարդ։ Հետաքրքրուղների միջեւ, որոնց ես հանդիպեցի այդ վակոնի մօտ, ի միջի այլոց գտնըւում էր եւ իմ ուղեկից արտիլերի մի սպայ, որը մի խելօք, ջերմ ու համակելի տղայ էր, ինչպէս եւ բոլորը, որոնց հետ մենք ծանօթանում ենք ճանապարհում պատահարար եւ ոչ երկար ժամանակի համար։

— Այդ ինչի՞ն էք նայում, — հարցրի ես։ Նա պատասխան չտեց եւ միայն աչքերով ցոյց տուեց մի կանացի պատկերի վրայ։ Նա 17-48 տարեկան ջահիլ աղջիկ էր, ոռուական զգեստ հագած, զլուխը բաց, վերնազգեստը անփոյթօրէն մի ուսի վրայ քցած։ Երեւում էր, որ նա ճամբորդ չէր, այլ զուցէ կայարանապետի կամ քոյրը եւ կամ աղջիկը։ Նա կանգնած էր վակոնի լուսամուտին մօտիկ եւ ինչ որ մի հասակաւոր ճամբորդ կնոջ հետ խօսակցութեան մէջ էր։ Առաջ քան ես կարող եղայ հաշիւ տալ ինձ տեսածիս վերաբերութեամբ, որ մասնակցութեան մէջ, թարմութեան մէջ, հոգու մաքրութեան, որ հնչում էր նրա ծիծաղի եւ ձայնի մէջ, եւ այն թուլութեան մէջ, որը մէնք

որի նմանը զգացել էի երբեմն հայկական դիւղում։

Այդ աղջիկը զարմանալի մի զեղեցկուհի էր, եւ այդ անկասկած էր թէ ինձ համար եւ թէ այն ամենքի համար, որոնք ինձ հետ նայում էին նրան։

Եթէ, ինչպէս ընդունուած է, նկարագրելու լինես նրա արտաքին մասերը առանձին-առանձին, իսկապէս զեղեցիկ էին միայն նրա սպիտակագոյն, ալիքածեւ, թանձր մազերը, որոնք ազատ թողուած եւ զլիսի վրայ սև ժապաւէնով կապուած էին, իսկ միւս բոլոր մասերը կամ անկանոն էին, կամ շատ սովորական։ Արդեօք նրա կոկետութիւն անելու առանձին ձեւից էր, թէ կարճատեսութիւնից, նրա աչքերը կկոցած էին, քիթը անվտանօրէն դէպի վեր բարձրացած, բերանը փոքր-պրոֆիլը թոյլ ու գանգաղ զծանկարուած, ուսերը տարիքին ոչ վայել նեղ, բայց և այնպէս այդ աղջիկը զործում էր իսկական զեղեցկունու տպաւորութիւն, եւ, նայելով նրան, ես կարող էի համոզուել, որ Ռուսի դէմքին, նրա համար որ նա զեղեցիկ թուայ, կարեւոր չէ ունենալ դէմքի կանոնաւոր խստապահանջ զծեր, այդ բաւական չէ, նոյնիսկ եթէ այդ աղջկայ դէպ ի վեր ցցուած քթի փոխարէն ուրիշը զնէինք, ինչպիսին հայ աղջկայ կա, նոնաւոր ու անսխալ պլաստիկ քիթն էր, այն ժամանակ, թւում է սրանից նրա դէմքը կը կորցնէր իր բոլոր զեղեցկութիւնը։

Լուսամուտի մօտ կանգնած խօսակցում էր այդ աղջիկը, երեկոյի խոնաւութիւնից կուչ գալով, յաճախ մեր վրայ նայելով, երբեմն ձեռները, կողքերին էր գնում, երբեմն բարձրացնում էր դէպ ի զլուխը մազերը շտկելու համար, խօսում էր, ծիծաղում, մէկ դէմքի վրայ զարմանք արտայայտելով, մէկսարսափ, եւ ես չեմ յիշում մի վայրկեան, որ նրա մարմինը եւ երեսը հանդիսաւ լինէին։ Նրա զեղեցկութեան բոլոր գաղանիքը եւ հմայքը հչնց այդ մանք, անվերջ զեղեցիկ շարժմունքների, ժողոտի, դէմքի խաղերի, մեզ վրայ արագօրէն հայեցների մէջ էր պարունակւում եւ այդ շարժմունքների նուրբ չնորհի ու ջահիլութեան զուգակցութեան մէջ, թարմութեան մէջ, հոգու մաքրութեան, որ հնչում էր նրա ծիծաղի եւ ձայնի մէջ, եւ այն թուլութեան մէջ, որը մէնք

այսպէս սիրում ենք երեխաների, թուչունների, դեռահասս եղջերուների եւ մատաղահաս ծառերի մէջ:

Սա մի թիթեռնիկային գեղեցկութիւն էր, որին այսպէս վայելում են վալոր, այդին մէջ թրթռալը, ծիծաղը, եւ ուրախութիւնը, որը լուրջ մտքի, տիրութեան, եւ հանգստութեան հետ չի բռնում, եւ թւում է բաւական է որ պըլլատֆօրմի վրայ մի լաւ քամի փշի, կամ մի անձրեւ զայ, որպէս զի փիրուն մարմինը յանկարծ թառամի, եւ գեղեցկութիւնը ցրիւ զայ, ինչպէս ծաղկի փոշին քմահամ:

— Այսպէս... ախ քաշելով մրմոաց ըսպան, երբ մենք, երկրորդ զանդից յետոյ ուղղուեցինք դէպի ի մեր վակոնը:

Բայց թէ ի՞նչ էր նշանակում նրա «այսպէս»ը, պարտք չեմ համարում դատել:

Դուցէ նրա համար ցաւալի էր եւ նա չէր ուզում հեռանալ գեղեցկուհուց եւ գարնանային երեկոյից ու մտնել խեղդուկ վակոնի մէջ, կամ թէ, թերեւս նրա, և ինձ համար, անհաշիւ ափսոսալի էր ե՛ւ գեղեցկուհին, ե՛ւ մենք, ե՛ւ ես ե՛ւ րոլոր ճամբորգները, որոնք ծոյլ ու չկամօրէն քաշւում էին դէպի ի իրենց վակոնները: Անցնելով կայարանի պատուհանի մօտով, որի յետեւմ, իր ապարատիքով նստած էր գեղնած դէմքով, չէկ մազերով բարձր զանգուրներով եւ գունաթափ ուժեղ այտոսկրներով տելեղափիստը, սպան հառաչեց եւ ասաց.

— Գրաղ եմ գալիս, որ այդ տելեղբաֆիստը սիրահարուած է այն գեղեցկուհու վրայ: Ապրել զաշտի մէջ մի տանիքի տակ այդ օդային արարածի հետ եւ չսիրահարուել, բարձր է մարդկային ուժից: Իսկ ո՞րպիսի դժբախտութիւն է, իմ բարեկամ՝ ո՞րպիսի ծաղը, լինել կորամէջք, գլուխուած, զունաթափ, կարգին եւ խելքը չկորցրած եւ սիրահարուել այդ գեղեցիկ ու թեթեւամիտ աղջկայ վրայ, որը մեզ վրայ զրօյի չափ ուշ չդարձրեց: Կամ թէ, աւելի եւս վատ: Երեւակայեցէք, որ այդ տելեղբաֆիստը սիրահարուած է եւ որ միեւնոյն

ժամանակ ամուսնացած է եւ որ կինը նոյնպէս կորամէջք է, զղզգուած ու կարգին, ինչպէս եւ նա ինքն է...: Տանջանք է:

Մեր վակոնի մօտ, տախտակամածի յենարանին-թիկնած կանգնած էր կոնդուկտորը եւ նայում էր այն կողմ, որտեղ կանգնած էր գեղեցկուհին. եւ նրա ցամաքած, կախուած, ոը-հաճելի կոչտ, անքուն անցրած գիշերներից եւ վակոնների օրօրուելուց խոնչած դէմքը արտայտում էր յոդնածութիւն եւ խորին տիրութիւն, որպէս թէ այն աղջկայ մէջ նա տեսնում էր իր ջահելութիւնը, բաղդաւորութիւնը, իր սթափութիւնը, մաքրութիւնը, կնոջը, զաւակներին, որպէս թէ նա խոստովանում էր եւ բզգում իր ամբողջ զոյլութեամբ, որ այդ աղջիկը իրենը չի և թէ մինչեւ սովորական մարգկայնական, ճամբորդական բախտը իրա համար՝ իր վաղաժամ ծերութիւնով, անշնորհքութիւնով եւ յուղալի դէմքով՝ նոյնքան հեռու է, որքան մինչեւ երկինք:

Ծնչեց երրորդ զանգակը, փշեցին սուլիչները եւ զնացքը ծուլօրէն շարժուեց: Մեր լուսամուտների առջեւ երեւացին սկզբում կոնդուկտորը, կայարանի կառավարիչը, յետոյ այդին, գեղեցկուհին իր հրաշալի մանկայառուկ խորամանկ ժպիտով...

Դուրս հանելով գլուխու, ես ետ նայեցի եւ տեսայ ինչպէս նա աչքով ճանապարհ քցելով մեր զնացքը, պլատֆորմով անցաւ պատուհանի առջեւով, որտեղ նստած էր տելեղբաֆիստը, շակեց իր մազերը եւ վաղեց այդի: Կայարանը արդէն չէր ծածկում արեւմուտը. զաշտը բաց էր. բայց արեւը արդէն նստել էր, եւ ծուխի մեւ քուլաները փուռում էին թաւշեայ կանաչ աշնանացանների վրայ: Թախտալի էր և զարնանային օդում ե՛ւ մթացող երկնքում ե՛ւ գակոնի մէջ:

Ծանօթ կոնդուկտորը մտաւ վակոն և սկզբեց վառել մոմերը:

Թարգմ. Ա. Աթելեան
Նախահիմեւան